

1. Սոկրատես եւ Պլատոն

Արեւմտեան փիլիսոփայութեան մէջ, բարոյագիտութեան պատմութիւնը կը սկսի յոյն դասական փիլիսոփաներ՝ Սոկրատեսով եւ անոր աշակերտած՝ Պլատոնով: Անոնք հակադրուելով սոփիստներուն, կը մերժէին սոփիստներու սկեպտիկ եւ բարոյականութեան հանդէպ ցանկացած որեւէ ապացոյց ներկայացնելու ընթացքը եւ մասնաւորաբար կը շեշտէին առաքինութիւններու ուսանելիութիւնը կամ օրինակելիութիւնը:

Առաքինութիւն (յուն.՝ aretê), յունական մտածելակերպի մէջ կը նշանակէ՝ ճարտարութիւն ու գերազանցութիւն՝ ընկերային իրաւասութեան տեսակէտէն: Բարոյագիտութեան գլխաւոր հարցադրումը այն էր, թէ ինչպէ՞ս հասնիլ կամ թափանցել հոգիի առաքինութեան:

Բարոյագիտական բոլոր պահանջները բաւարարող ու բարոյական ճիշդ վարմունքի համար հարկ է ամենէն առաջ ճանչնալ այդ *ճիշդը*.- մարդ պետք է նկատէ, որ գաղափարներու մէջ, *բարիի* գաղափարը, գերագոյնն է: Քանի որ առաքինութիւնը բարոյական արժէք է, հաւանաբար ոչ ոք դիտմամբ անարժէք վարմունք կ'ունենայ կամ չարութիւն կը գործէ: Ան որ ոչ-բարոյական վարմունք կ'ունենայ անիկա մոլորութեան զոհն է: Ուրեմն միայն բարի ու արդարամիտ վարմունքը պետք է իրագործուի. եւ ասիկա մարդ պետք է իրագործէ ոչ անոր համար, որ անկէ առաւելութիւն կամ շահ մը կրնայ ունենալ: Աւելին՝ մարդ պետք է իրագործէ բարոյական վարմունքը, նոյնիսկ եթէ անկէ վնաս կրէ: «Անարդարութիւն գործելը աւելի վատ է, քան անարդարութիւն կրելը»⁽¹²⁾, ինչպէս Սոկրատեսի տիպար պարագային, երբ ան կտրականապէս մերժեց բանտէն փախուստ տալ եւ ազատական խմբի թոյնով բաժակը:

Պլատոնի համաձայն, *բարիի* վեհ գաղափարը նոյնիսկն ներդաշնակութիւնն է՝ ճշմարտութեան, գեղեցկութեան եւ երջանկութեան: Պլատոն, իր *բարիի* գաղափարը աւելի գործնական դարձնելու համար, զայն կը միացնէ *արդարութեան* գաղափարին: Ուրեմն, բարոյագիտութեան համաձայն բարին ու արդարամիտը նոյնիսկն իմաստունն է, որուն գիտութիւնը եւ իմաստութիւնը կ'երաշխաւորեն առաքինութիւնը:

Պլատոնի բարոյագիտութիւնը քաղաքական գործնական կիրառում կը գտնէ իր «*Պետութիւնը*» (յուն.՝ „politeia”) երկին մէջ, ուր ան կը պահանջէ, որ իտեալական պետութիւնը փիլիսոփաներու կողմէ կառավարուի: Որպէս գաղափարապաշտ, Պլատոն, իր ուսուցչին Սոկրատեսի նման, կը պնդէ իր բարոյագիտական բացարձակ իտեալը, որ իրականութեան մէջ անհասանելի ըլլալ կը թուի:

(12) «Անարդարութիւն գործելը աւելի վատ է, քան անարդարութիւն կրելը», արտայայտութիւնը կը վերագրուի Սոկրատեսի, ան յիշուած է Պլատոնի գլխաւոր երկերէն «Գորգիաս»ի մէջ (հոն, էջ 469c եւ 474b):

(Բնագիրը.- τὸ ἀδίκειν τοῦ ἀδικοῦσθαι κάκιον ...)